

## ԹՈՒՍԵՑ ԵԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ՊԵՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

### I

Նոր չէ, որ Խուսաստանը ուշադրութիւն է դարձնում Պարսկաստանի վրայ. գեռ գարեր առաջ նա ձգաել է տեղ բըռնել այդ երկրի մէջ, նուածումներ անել և զօրեղացնել իր դիքքը թէ քաղաքական և թէ տնտեսական տեսակէաներից: Նոյն այդ ձգտումը շարունակւում է և աժմ աւելի ուժեղ և որոշակի կերպով: Բայց անցեալում նուածումները կատարւում էին զէնքի միջոցով, իսկ այժմ խաղաղ ճանապարհով:

Խուսաստանը սկսեց առանձին ուշադրութիւն դարձնել Պարսկաստանի վրայ մանաւանդ վերջին տաս տարում և այդքան կարծ ժամանակամիջոցում շատ աջքի ընկնող աջողութիւններ ունեցաւ և ապագայի փառաւոր հեռանկարից ոգերուած՝ այժմ աւելի ու աւելի ձգտում է դիքք գրաւել: Հիւսիսային Պարսկաստանը, այսինքն Ասրպատականի ընդարձակ նահանգը, ուր առաջ ազդեցիկ հեղինակութիւն վայելող Անդիխան էր, այժմ դանուում է համարեա բացարձակապէս Խուսաստանի ազդեցութեան տակ:

Հիւսիսային Պարսկաստանում նա իր դիքքը ապահովելով՝ այժմ ձգտում է իր ոյժը տարածել ամբողջ Պարսկաստանում, առևտրական նուածումներ անել իրանի ամբողջ երկրում: Այդ նպատակին հասնելու համար նա մի կողմից աշխատում է բարեկամական յարաբերութիւն պահպանել իր հարեանի հետ, ուրախութեամբ խոչոր զումարներով պարագ է տալիս նրան և այն: Իր այդ հեռատես քաղաքականութեան արդինքը արդէն տեսնում է Խուսիան: Պարսկաստանը չը կարողացաւ 1903 թ. վեարուարի 1-ին (ն. ա.) վճարել սահմանուած գումարը՝ Խուսիայից իր արած փոխառութեան ½-ը հանգնելու համար, ուս-

տի ոռւսաց կառավարութիւնը կարգադրել է, որ սրանից յետոյ մաքսատների հասոյթները, որոնք բացառապէս զբւում են Պարսկաստանի պարագի տոկոսը ծածկելու համար, ստանան Պարսկաստանի ոռւսաց բանկը կամ նրա բաժանմունքները, իսկ ուր բանկ չը կայ, կը ստանան յատուկ այդ նպատակով այնտեղ նշանակուած գործակալները:

Այս մի քանի տարուայ ընթացքում Ռուսաստանը այնպիսի հիմարկութիւններ հիմնեց Պարսկաստանում և այնպիսի ձեռնարկութիւններ ակսեց, որոնք գաֆիս են աւելի ու աւելի առետը բական յարաբերութիւնները կանոնաւորելու և սերտ կապեր հաստատելու երկու երկրների մէջ: Այդ հիմնարկութիւններն ու ձեռնարկութիւններն են՝ ոռւսական փոխատու բանկը, ոռւսաց ապահով. և ճանապարհ. հաղորդակց. ընկերութիւնը, «Նազեժդա» ընկերութիւնը, խճուղի շինելը և այլն:

Ռուսաց բանկ հիմնուեց Թաւրիզում 1901 թւին, որը կազմում է ոռւսաց պետական բանկի մի ճիւղը: Ռուսական բանկը ամեն կերպ աշխատում է արտօնութիւններ ու դիւրութիւններ տալ թէ թուրքը և թէ հայ վաճառականներին, նամանաւանդ նրանց, որոնք ոռւսական ապրանք են ներմուծում:

Ռուսական բանկը ձգտում է վերացնել նաև մի արգելք, դա կուրսի փոփոխական դրութիւնն է: Բանկը ձգտում է հաւասարեցնել ոռւսական դուբլին պարսկական 5 դրանին, հէնց այդ նպատակով Պետերբուրգի պետական դրամատանը կտրում են պարսկական 5 դրանանոց արծաթ դրամներ, որի քաշը 61 դոլարով ծանր է ոռւսական դուբլուց: Այս նոր կտրուած դրամից Թաւրիզի ոռւսական բանկը ստացաւ 60,000 թուման, և վաղուց մտել է շրջանառութեան մէջ: Եթէ բանկը կարողանայ հասնելիք նպատակին, կը ստեղծուի վաճառականների համար մի շատ նպաստաւոր դրութիւն, և դրանով զգալի կերպով զարկ կը տրուի ոռւսական ապրանքների աւելի լայն չափերով տարածուելուն. մի խօսքով ոռւս-պարսկական առեստրի համար շօշափելի դիւրութիւն կը ստեղծուի:

Մեծ զարկ են տալիս ոռւսական ապրանքների տարածուելուն մանաւանդ „Հաջէյդա“, „Росс. страх. транс“: ընկերութիւնները, որոնք ձգտում են ամեն դիւրութիւններ տալ վաճառականներին. վերադիր վճարով չընդունում են ապրանքներ Ռուսաստան ուղարկելու և կամ ստանալու արտասահմանից: Այս երկու ընկերութիւններն ել մեծ քանակութեամբ շաքար են վաճառում Հիւսիսային Պարսկաստանում:

„Հաջէյդա“ ընկերութիւնը, ինչպէս և միւս ընկերութիւ-

նը, զլիսաւորապէս գործում է Ատրպատականում, մասնաւորապէս ամբողջ Պարսկաստանում։ Ատրպատականի գրէթէ բոլոր կենտրօնական քաղաքներում այժմ՝ „Նադեյդա“-ն բաժամունքներ ունի, ինչպէս Թաւրիզ, Արդարիլ, Ռումիի, Մարազա և Սոուլ-Բուլզազ։ Իսկ Պարսկաստանի միւս մասերից միայն Խօրասանում ունի ագենտ, մօտ օրերս բացուելու է նաև Թեհրանում առանձին բաժանմունք։ „Նադեյդա“-ն այս մի տարի է, ինչ սկսել է իր գործունէութիւնը Պարսկաստանում, բայց այդքան կարծ ժամանակամիջնոցում շատ արագ կերպով տարածուեց, և մեծ շանսեր կան, որ շատ մօտիկ ապագայում յայտնի գարի կը տայ ոռուսական աղդեցութեանը, և ոռուսական ազրանքները ահազին քանակութեամբ կը ներմուծուեն Պարսկաստան, զլիսաւորապէս Հիւսիսային Պարսկաստան, կը տիրեն այդ մասի առեարական շուկաները և միակ տէրը կը լինեն, առանց որևէ է մրցակցի։

Ոռուսաստանը աշխատում է նուամել իր ապրանքներով ամբողջ Պարսկաստանի առետրական աշխարհը՝ չը բաւականանալով միայն Ատրպատականի նահանգով։ Այժմ նոյնիսկ մի քանի խոշոր առետրական ֆիրմաներ, օր. ՄօրօզօԵ, յատկապէս մարդիկ են ուղարկում Պարսկաստան՝ ժողովրդի պէտքերը և ճաշակը ուսումնասիրելու համար։ Մի քանի ամիս առաջ մի մանութակտուրային ընկերութեան ներկայացուցիչ էր եկել Թաւրիզ և երկար խորհրդակցել էր պարսիկ վաճառականների հետ, իսկ երկու ամիս առաջ եկել էր „ՊօոօԵ“-ի խոշոր ֆիրմայի ներկայացուցիչը՝ ոռուսական թէյը այս երկրում տարածեհամար։ „Նադեյդա“-ն յանձն է առել տեղափոխութեան ամեն տեսակ գիւրութիւններ տալ պարսիկ վաճառականներին, և թէ նրանք վերը յիշած ֆիրմաների հետ պայմանաւորուեն։

Հէնց այժմ ոռուսական մի քանի պարանքներ, օրինակ նաւթը, շաքարը, չթեղէնը, ահազին նուաճումներ են անուան Պարսկաստանի, մանաւանդ Ատրպատականի շուկաներում։

Իսկ Ոռուս-Պարսկական առետրական նոր զաշնագիրը, որ հաստատուեց փետրուարին, դալիս է էլ աւելի զօրեղացնելու ոուսաց աղդեցութիւնը Իրանի երկրում։

Այժմ մեր ձեռքի տակ ունենք տպագրուած նոր տարի փների մի ամբողջ շարք շատ մանրամասն և որոշակի, որ արդէն գործազրութեան մէջ է մտել։ Ոռուս-պարսկական նոր զաշնագրուով շատ բան է փոխուել մաքսի վերաբերմամբ, չափերի և աստիճանների իջնելը և բարձրանալը շատ է զգալի։ Եւ մի բան, որ շատ ակնյայանի է և աչքի է ընկնում հէնց սկզբից, այդ այն է, որ գրէթէ ամեն ինչ փոխուել է յօգուտ Ոռուսաստանի։

Այն ապրանքները, որոնցից մեծ քանակութեամբ ներմուծ-

ւում էին եւրոպական միւս պետութիւններից, օրինակ մետաքսէ գործուածքներ, թանգագին քարեր, ոսկէ և ուրիշ տեսակի ժամացայցներ, թէյ, մահուղեղէններ և այն, դրանց մաքսերի չափերը սարսափելի աստիճանի են հասել, որ երբէք ձեռնուուչէ դրանց առեւրով զբաղուել Պարսկաստանում։ Թէյի մաքսը, որից ահազին քանակութիւնով ներմուծւում էր ուրիշ երկրներից, որ առաջ  $50\%$  էր, այժմ բարձրացել է  $50-75\%$ -ի (սպիտակ և սև թէյ)։ Այն ինչ նաւթը, շաքարը և այլն, որոնք բացառապէս ներմուծւում են Ռուսաստանից, դրանց մաքսը աւելի իջել է։ Նաւթի մաքսը, որ առաջ  $50\%$  էր, այժմ  $30\%$  է, շաքարը առաջ  $50\%$  էր, այժմ  $31/3\%$ ։ Կօնեակ, լիքեօր, վիսկի, գլխարկներ \*) և այլն, որոնք շատ անշան բացառութեամբ դալիս են Արևմտեան եւրոպայից, դրանց համար վերցնում են ահազին մաքս, այն ինչ գարեջուր, ածուխ, ամեն տեսակի ալիւրներ, ձկնեղէն, բամբակէ գործուածքներ, կենդանիներ, (ձի, էջ, ոչխար և այլն), կաւէ թրծուած և չը թրծուած ամանեղէններ, որ բաւականին արտահանում է Ռուսաստանը, ներմուծւում են Պարսկաստան առանց մաքսի։

Այդպէս ուրեմն ներմուծման գէպքում ամեն կողմից շահը Ռուսաստանի կողմն է։ նոյն բանը կայ և շատ նկատելի է Պարսկաստանից արտահանուած ապրանքների վերաբերմամբ։ Յայտնի է, որ Պարսկաստանը մեծ քանակութեամբ հում նիւթեր է արտահանում, ինչպէս սարգա իր բոլոր տեսակներով, նուշ, մասամբ բամբակ, և բացառապէս Ռուսաստան, կամ Ռուսաստանի միջոցով ուրիշ երկրներ։ Այդ մրգեղէնների մաքսը թէն մի փոքր բարձրացել է, բայց այդ երբէք չէ խանդարելու աւելի մեծ քանակութեամբ արտահանելուն, որովհետեւ Պարսկաստանը զրանցից այլևս մաքս չէ վերցնելու։ Առաջ ինչ չափով Պարսկաստանը վերցնում էր, համարեանոյնքան այժմ աւելացել է ոռուաց մաքսի վրայ։ Արտահանողների և վաճառականների համար գրէթէ նոյն չափն է միացել։

Այն ինչ կան ապրանքներ, օրինակ՝ գորդ, շալ և այլն, որոնք շատ անհրաժեշտ են Ռուսաստանին, արտահանուում են գրէթէ առանց մաքսի։

Ահա այսպէս ամեն ինչ փոփոխուել է յօդուտ Ռուսաստանի. Զը մոռանանք ասել, որ այդ նոր գանցագրի 8-րդ յօդուածով իբրև չափ որոշուում է Թաւրիզի բաժմանը, որ ունի 640 պարսկա մասաւ կամ ոռուական 7,27 գր. 9-րդ յօդուածով որոշուում է, որ քաշը լինելու է brutto: 4-րդ յօդուածով ոչնչա-

\*) 5 կոտան. կօնեակ, վիսկի բաթմանը 12 դոան, գլխարկ  $15\%$ ։

նում են ռահդարին, ալաֆիսանան, զափանը և ուրիշ տեղական հարկերը <sup>\*)</sup>): Այս տեղական տուրքերը վերանալով Պարսկաստանի համար՝ ի հարկէ՝ ֆինանսական տեսակիչոց մի աստիճան վնաս է, բայց մեծ չափով նպաստում է վաճառականութեան տարածման և տալիս է մի շարք յարմարութիւններ:

Խնձորէս տեսնում էք, ոռուս-պարսկական այս նոր դաշնագործով լայն և ընդարձակ ասպարէզ է բացւում իրանի երկրում ոռուսական ապրանքների համար և տարէց տարի աւելի ու աւելի կ'ընդայնուեն և ահազին նուաճումներ կ'անեն Միակ արգելքը, որ մեծ չափով խանգարում է աւելի տարածուելուն և կանոնաւոր յարաբերութիւններին, դա չնորհքով ճանապարհների կատարեալ բացակայութիւնն է: Հաղորդակցութեան միջոցները զեռ հնագարեան վիճակի մէջ են, ձգւում են ձորերի, առուների միջով, հանգամանք, որը խանգարում է կանոնաւոր երթեեկութեան և առևտրի հաղորդակցութեան զարգանալուն: Այս հանգամանքը լուրջ կերպով դրազնում է ոռուսակառաջնորդ կառաջնորդեան, և եռանդուն կերպով աշխատում են վերացնել այդ արգելքը:

Ոռուսաստանի ձեռք բերած այս բոլոր արտօնութիւնները և յաջողութիւնները Պարսկաստանում գրաւեց հարիան ուրիշ տէրութիւնների, մանաւանդ Անգլիայի ուշադրութիւնը, որոնք նոյնալիս շահներ ունեն այս երկրում:

## II

Հիւսիսային Պարսկաստանի գլխաւոր քաղաքում, Թաւրիկում կան հիւպատուններ եւրոպական շատ տէրութիւններից. բայց զրանցից ամենաազդեցիկը անգայման ոռուսաց հիպատուն է: Ոռուսաց կօնսուլատը առանձին դիրք և հեղինակութիւն է վայելում. Արագատականի նահանգում, կօնսուլատի վրայ թուրքերը նայում են որսկէս մի ամննառմեղ և կարող հիմնարկութեան վրայ: Ոռուսաց կօնսուլատի հեղինակութիւնը աւելի բարձրացաւ և աւելի սկսեց տարածուել, ուժեղանալ նրա ազդեցութիւնը նամանաւանդ 1897 թւի գարնանը Թաւրիկում տեղի ունեցած ամբոխային ցոյցից յետոյ: Թուրք խառնիճաղանձ խուժմանը զրգուած մի գէպից՝ յարձակւում է հայարը-

\*) Արտասահմանեան ապրանքը Պարսկաստան մտնելիս՝ սահմանում բացի նշանակուած մաքսը ստանալուց, այդ ապրանքը Պարսկաստանի խրահանձնիւր քաղաքից անցնելիս առնում էին որշ տուրք, որ կոչում էր «ուահդարի»: Դափանն է մրգեղէները կշռելու տուրք, ալաֆիսանան՝ փայտի տուրք:

նակ թաղերի վրայ և սկսում է կողոպտել, թալանել: Հայերը պատագարան են գտնում ոռւսաց կօնսուլատում: Ոռւսաց կօնսուլ Պետրովի կարգադրութեամբ ոռւսաց զօրքը պէտք է մըտնէր Թաւրիդ քրիստոնեաններին պաշտպանելու համար, բայց խաղաղում է ամբոխը, դադարում է թալանը, և, ինչպէս պատմում են, ոռւսաց զօրքը յետ է դառնում Արաքսի ափից: Բոլոր կողոպտուած հայ ընտանիքները ոռւսաց կօնսուլի կարգադրութեամբ մանրամասն ցուցակով ներկայացնում են իրանց կրած վնասները, և ալ. Պետրովը առանց որևէ զիջումի առնում է այդ պարսից կառավարութիւնից և յանձնում հայերին: Այս դէսքը մեծ սարսափի է տարածել բնիկ ժողովրդի վրայ և հեշտութեամբ չէ մոռացւում:

Մի տեսակ երկիւղածութեամբ է նայում թուրք ամբոխը ոռւսաց կօղակին, նրա մէջ ինչ որ գերբնական ուժ է ընդունում, մանաւանդ շատ ազդում է կօղակի մեծ և բրդոտ զիսարկը. ով կօղակի նման է հագնուում, նրան թուրքը կօղակ է ընդունում:

Թէև առհասսարակ օտարահպատակի գոյքը և կեանքը ապահով է Պարսկաստանում, բայց ոռւսահպատակինը ուրիշ է: Նա միանգամայն ազատ է այս երկում, ազատ կողոպուտներից, հարստահարութիւններից, ազատ յարձակումներից. նրա մազին անգամ ոչ ոք չէ յանդգնում դիպչել: Խոկ եթէ մի բան է պատահում ոռւսահպատակին, թէկուզ շատ աննշան վնաս է կըրսում նա, խիստ պատճի է ենթարկուում չարագործը պարսից կառավարութեան կողմից՝ ի հարկէ՝ ոռւսաց կօնսուլատի պահանջի համաձայն. եթէ նրան ճանապարհորդելիս կողոպտում են աւազակները, նոյն տեղի, կամ մօտիկ տեղերի (ուրիտարուել է այդ) ժողովուրդ տուժում է կրկնապատիկը, եռապատիկը: Ուր էլ կողոպտուած լինի ոռւսահպատակը, թէկուզ Ասրաբատականի մի խուլ և հեռաւոր անկիւնում, եթէ իւմացուեց, առնում է կօնսուլատը զեռ վնասից աւելի: Քանի քանի նման դէսքեր են պատահել: Խոկ եթէ թուրքը յանդգնում է ձեռք բարձրացնել մի ոռւսահպատակի վրայ, վայ նրան, տուժում է նա շատ խիստ կերպով: Հէնց անցեալ օրը երկու թուրքերի ծեծեցին, որովհետեւ դրանք մի ոռւսահպատակի վրայ ձեռք էին բարձրացնել. և ծեծում են այնտեղ, ուր կատարուած է լինում դէսքը:

Հէնց այս հանգամանքն է, որ շատ հայեր, մանաւանդ թուրքեր ձգուում են, մեծ գումարներով զբամ են ծախսում, որպէսզի աջողեցնեն ոռւսահպատակութիւն ընդունել: Շատ շատերի նախանձն է զրգուում ոռւսահպատակ լինելը:

Առհասարակ Պարսկաստանի կեանքի բոլոր երեսյթների մէջ աչքի է զարնում Ռուսաստանի զօրեղ ազդեցութիւնը: Ֆըրանսներէն լեզուն առաջ տիրապետող օտար լեզուն էր հէնց նոյնիսկ Ասրպատականում, Թաւրիզում, այժմ համարեա թէ տեղի է տուել ոռւսաց լեզուին: Հետզհետէ ոռւսաց լեզուն մի անհրաժեշտ տարր է զառնում Ասրպատականի կեանքի շատ երեսյթներում, մանաւանդ այս փոխադրական ընկերութիւնների, ոռւսաց բանկերի հիմնուելուց յետոյ:

Թաւրիզի թէ «Արամեան» և թէ «Հայկազիան-Թամարեան» գպրոցներում ոռւսաց լեզուն համարւում է որպէս առաջնակարգ առարկայ. վերջին գպրոցում սովորեցնում են նոյնիսկ աշակերտուհիներին: Ռուսաց լեզուն կայ նաև բողոքականների ուսումնարանում: Բացի դրանցից՝ թուրքաց «Քեամար» և «Լողմանեան» գպրոցներում ուրիշ լեզուների շարքում կայ և ոռւսաց լեզուն. այս մի տարի է, ինչ բացուել է և մի մասնաւոր գպրոց, ուր անցնում են բացառապէս ոռւսաց լեզու, որի աշակերտները՝ ի հարկէ՝ թուրքեր են: Գաւառական մի քանի գպրոցներում էլ ոռւսաց լեզուն պարտադիր է դարձել: Ինչպէս լսում ենք, մտադրութիւն կայ բանալ Թաւրիզում ոռւսաց մի գպրոց բէալական գպրոցների ծրագրով... և որպէս թէ Ն. Բ. Թագաժառանը խոստացել է իր բարոյական և նիւթական աջակցութիւնը այդ հիմնուելիք գպրոցին:

Եւ այս բոլորը ոռւսաց լեզուի անհրաժեշտութիւն կազմող յայտնի փաստեր են: Ծնորհիւ այդ գպրոցների, նոյնպէս և այն յաճախակի յարաբերութիւնների, որ պարսկաստանցիները ունեն Ռուսաստանի հետ, երբեմն թէ Թաւրիզում և թէ ուրիշ տեղերում լսում են ոռւսերէն ազւաղուած խօսքեր, ինչպէս օրինակ՝ փաղի սուլա, ըզդրասթի, քութա փայդօշ, փաշօլ և այլն: Գործածութեան մէջ են՝ սամովար, տարելկա, եամշչիկ, ցէպօչկա, խոզեային, կնուտ, տրօյկա, սապօզ, պօլսապօժկա, չօթք, վօդկա և այլն:

Խմբեղէններ վաճառող (կանդիտեր) խանութների թիւը Թաւրիզում արագ կերպով աճում է, նման բոլորովին՝ ոռւսականներին, և բանը այն է, որ խանութպանները ոռւսահայի հետ աշխատում են անպատճառ ոռւսերէն խօսել, որոնք ի հարկէ՝ եղել են Ռուսաստան: Թաւրիզում եթէ տեսնէք փոքր ի շատէ կանոնաւոր և մաքուր խանութ, իմացէք, որ նրա տէրը անշուշտ եղել է Ռուսաստան:

Շատ քիչ վաճառականներ կը լինեն, որ տարին մէկ կամ մի քանի անգամ կովկաս և Ռուսաստան չը գնան. Կրանք միշտ էլ տարաբերութիւն ունեն Ռուսաստանի հետ: Ոչ միայն վաճառա-

կանները, այլ ևս հասարակ, ույյեա ժողովրդին էլ են ծանօթ կովկասը և Ռուսաստանը։ Նա ատրպատականցու միակ պանդընտավայրն է։ Տարեկան մօտաւորապէս 30,000 հոգի պանդխառում են զլաւորապէս Բագու, Շուշի, Թիֆլիս, Բաթում, Փոթի, Վլադիկավազ, Ռոստով Դօնի վրայ, Հաշտարխան և այլն։

Ահա ինչպիսի կապեր կան Ռուսաստանի և արեելքի այս երկրի մէջ, Բացի այդ, շատ պարզ նկատելի է և այս, որ Ատրպատականի հայերը ոռուսականին նման շատ անուններ ունեն, օրինակ՝ Սօնիա, Օլգա, Մանիա, Անիւտա, Իվան, Դիմիտրիյ և այլն։

Մեր յօդուածից պարզուեց, թէ ինչպիսի շանսեր կան առաջայում Ռուսաստանի քաղաքական և առետրական շահերը ընդարձակուելու վերաբերմամբ. իսկ երբ երկաթուղին կը միացնէ երկու հարևան պետութիւնները, զարմանալի չի լինի. եթէ Ատրպատականը դառնայ Երևանեան նահանդի շարունակութիւնը...

Ե. ՖՐԱՆԳԵԱՆՑ